

նօթ շեղմամբ կ'երթայ կը կանգնի վրամշապհոյ կամ Արտաշեսի բանակին առջեւ, ու զայն կը գծէ ուղղակի: Եւ մեք կը տեսնենք՝ թէ ի՞նչպէս հոն «ճաշք զճաշ մղիցեն եւ ընթրիք զընթրեօք անցանիցեն, զուսանք երգիցեն, փողարք զձայն փողոցն նուագիցեն¹»: Ի՞նչ է տարբերութիւնն այս բանակին ու մեր տեսած գիներբուաց տաճարին միջեւ:

Հօր անմատոյց ամբոցն Արտագերք պաշարուած էր Պարսից բերաւոր զօրքերէն, եւ անոր մէջ ապաստանած էին Փառանձեմ տիկինն ու տասնուեօթն հազար անձինք, զուր սպասելով Պապայ փրկարար զալստեան: Թշնամին վարը մահ եւ աւեր կը սփռէր, եւ կարգը պիտի գար բերդականաց: Իսկ անոնք այդ ճգնաժամին անհոգ եւ անխորհուրդ, «ուտէին եւ ըմպէին եւ ուրախ լինէին», որպէս թէ իրենց շուրջ հայրենի հողը փոխանակ արեան՝ վարդով ծածկուէր. մինչեւ որ զառն կորուստն իրենց ալ հասաւ ծախիչ մահ-տարածամով մը, որ հարկաւ արդիւնք էր իրենց անժուժկալ զեղխութեանց, պատմըջէն երկնային պատիժ մը համարուած, եւ որ ստիպեց զՏիկինն անձնատուր լինել

1. Ոսկ. Մտթ. Բ, 66. յն. է լոկ՝ «ընթրելով եւ սրբն-գելով»: